ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՍԱՏՄ կառավարման խորհրդի արտահերթ նիստի

Ք. Երևան, 25 դեկտեմբերի 2018 թվական

Ժամը՝ 15:20-16:30

Մասնակցում էին՝

Գ. Գևորգյան – ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար (խորհրդի նախագահ)

Հ. Այվազյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (խորհրդի անդամ)

Ա. Հովհաննիսյան – ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ (խորհրդի անդամ)

Ա. Բաբայան – ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ (խորհրդի անդամ)

Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (խորհրդի անդամ)

Բ. Պիպոյան – <<Իրազեկ և պաշտպանված սպառող>> ՀԿ ղեկավար (խորհրդի անդամ)

Դ. Պիպոյան – ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի ղեկավար (խորհրդի անդամ)

Գ. Ավետիսյան – ՍԱՏՄ ղեկավար

Է. Ճաղարյան – ՍԱՏՄ ղեկավարի տեղակալ

Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի փորձագետ

Ա. Ավետիսյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ

Վ. Հարությունյան – ՍԱՏՄ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Է. Բասենցյան – ՍԱՏՄ ընդհանուր բաժնի պետ

Բացակայում էին՝

Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն (խորհրդի անդամ)

Տ. Գասպարյան – ՓՄՁ ասոցիացիայի նախագահ (խորհրդի անդամ)

Ողջունելով ներկաներին՝ կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար Գ. Գևորգյանը հաստատեց, որ քվորումն ապահովված է: Օրակարգային հարցի քննարկումից առաջ Գ. Գևորգյանը ներկայացրեց տեղեկատվություն նախարարության և ՍԱՏՄ լիազորությունների ու գործառույթների նախատեսվող փոփոխության վերաբերյալ, ինչպիսիք են, օրինակ, գիտական գործառույթները գիտական կազմակերպություններին և գիտական կենտրոններին փոխանցելը, վերահսկողական գործառույթները տեսչական մարմնին

պատվիրակելը և այլն: Այնուհետև խորհրդի նախագահն առաջարկեց անցնել օրակարգային հարցի քննարկմանը:

Ա. Պողոսյանը նկատեց, որ խախտվել է հարցի քննարկման ժամկետը, ստուգումների տարեկան պլանը սահմանված կարգով պետք էր հաստատել մինչև դեկտեմբերի 1-ը: Նա նաև նկատեց, որ չի երևում, թե փաստաթղթի մշակումը ինչ չափորոշիչներով է կատարվել, և ըստ էության բացակայում է հարցի բովանդակային կողմը:

Գ. Գևորգյանն առաջարկեց փաստացի ստուգումը սկսել պլանի հաստատումից 1 ամիս անց, իսկ տնտեսվարող սուբյեկտների ռիսկայնությունը գնահատելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1679-Ն որոշման պահանջներով:

Հ. Այվազյանը փաստեց, որ տեսչական մարմինը ստեղծված է, ներկայումս կա միայն լիազորությունների տարանջատման, մարմնի կանոնադրության հաստատման և ոլորտային օրենքների մեջ հակասությունների լուծման խնդիր: Ժամկետի երկարացումը հիմնականում վերաբերվում է նախատեսվող փոփոխություններով պայմանավորված՝ մարմնի աշխատակիցների պաշտոնավարման ժամկետին: Նա առաջարկեց առաջնորդվել <<Տեսչական մարմինների մասին>> ՀՀ օրենքով և ստուգումների տարեկան պլանը հրապարակել մարմնի պաշտոնական կայքում, իսկ ստուգումները սկսել այն ուժի մեջ մտնելուց հետո՝ հրապարակումից 1 ամիս անց:

Խորհրդի նախագահն առաջարկեց 1-օրյա ժամկետում խորհրդի անդամների համաձայնեցմանը ներկայացնել ստուգումների պլանի նախագծի խմբագրված տարբերակը: Խորհրդի անդամներին Գ. Գևորգյանը խնդրեց ոլորտին առնչվող բոլոր մտահոգությունների, խնդիրների և դրանց լուծման հնարավորությունների վերաբերյալ կարծիքները և առաջարկությունները ներկայացնել իրեն:

Ա. Բաբայանի հարցը վերաբերում էր առևտրի ցանցերին, թե արդյոք բոլոր առևտրային ցանցերը ներառված են ստուգման պլանում, և եթե ներառված են, ապա ինչպես է մեթոդաբանությամբ որոշվել, որ բոլորը ռիսկային են: Չնայած նրան, որ ըստ տեղեկատվության, այդ ցանցերը եղել են նախորդ տարվա ստուգումների պլանում կամ ստուգվել են բողոքի հիման վրա:

Դ. Պիպոյանն առաջարկեց ռիսկայնության գնահատման ժամանակ հիմնվել ոչ թե սպառողի բողոքի վրա, որը հիմնականում սուբյեկտիվ բնույթ է կրում, այլ առաջնորդվել գիտական մեթոդներով մշակված գնահատման մեխանիզմներով: Նա նաև ներկայացրեց համառոտ տեղեկատվություն ռիսկերի գնահատման ավտոմատացված համակարգի ներդրման անհրաժեշտության, մարդու առողջության վրա սննդի ռիսկի անմիջական ազդեցության և ռիսկերի գնահատման գործառույթը գիտական մարմիններին պատվիրակելու վերաբերյալ:

Ա. Ասոյանն առաջարկեց ստուգումների տարեկան ծրագիրը կազմել բացառապես ՀՀ կառավարության 1679-Ն որոշման հիման վրա և ցանկից հանել անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտների տնտեսվարողներին, մինչև այդ ոլորտներում ևս կլինի հաստատված ռիսկի հաշվարկման մեթոդաբանություն:

Բ. Պիպոյանն առաջարկեց բարձր ռիսկային օբյեկտում 3 անգամ ստուգում իրականացնելուց հետո խախտումներ չհայտնաբերելու դեպքում նվազեցնել ռիսկայնության աստիճանը:

Հ. Այվազյանը օրակարգային հարցի շրջանակներից դուրս խոսեց ՍԱՏՄ գործողությունների ընթացակարգային որոշ բացթողումների մասին: Մասնավորապես, սահմանված կարգով խորհրդի քննարկմանը չեն ներկայացվել.

- 2019 թվականի գործունեության տարեկան ծրագիրը՝ նշելով խնդիրները, թիրախները, գործողությունները,

- 2019 թվականի իրազեկման տարեկան ծրագիրը՝ նշելով խնդիրները, թիրախները, գործողությունները,

- ՍԱՏՄ կանոնադրության և ոլորտը կարգավորող իրավական ակտերի նախագծերի փաթեթը:

Որոշվեց՝

Հանձնարարել ՍԱՏՄ ղեկավար Գ. Ավետիսյանին՝

1. 1-օրյա ժամկետում խորհրդի անդամներին ներկայացնել ստուգումների պլանի լրամշակված տարբերակը՝ հստակ սահմանելով, թե որ մեթոդաբանությամբ է հաշվարկվել ռիսկայնությունը և ինչ կարգով է ընտրվել մեթոդաբանությունը:
2. 2019 թվականի 1-ին եռամսյակում ստուգումների փոխարեն նախատեսել ուսումնասիրություններ, շրջայցեր, դիտարկումներ՝ առանց պատասխանատվության միջոցների կիրառման:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ / Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ Հ. ԱՅՎԱԶՅԱՆ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ա. ԲԱԲԱՅԱՆ

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

Բ. ՊԻՊՈՅԱՆ

Դ. ՊԻՊՈՅԱՆ